

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ամբիոնին կից պետության և իրավունքի կլինիկան (այսուհետ՝ Կլինիկա) ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետև՝ ԳԿՄԿ) կառուցվածքային ստորաբաժանում է, Իրավագիտության ամբիոնին կից գիտագործնական աշխատանքների բազային կենտրոն, որը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ԳԿՄԿ-ի և սույն աշխատակարգին համապատասխան:

2. Կլինիկայի անվանումն է.

1) հայերեն լրիվ՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ամբիոնին կից Պետության և իրավունքի Կլինիկա, կրճատ՝ Պետության և իրավունքի Կլինիկա (ՊԻԿ),

2) ռուսերեն լրիվ՝ Клиника государства и права при Кафедре юриспруденции Международного научно-образовательного центра Национальной академии наук Республики Армения, կրճատ՝ Клиника государства и права (КГП),

3) անգլերեն լրիվ՝ Clinic of State and Law in the Department of Jurisprudence at the International Scientific-Educational Center of the National Academy of Sciences of the Republic of Armenia, կրճատ՝ Clinic of State and Law (CSL):

3. Կլինիկայի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 24Դ, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն:

4. Կլինիկան կարող է ունենալ տարբերանշան և կարգախոս:

5. Կլինիկան կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել ԳԿՄԿ տնօրենի ներկայացմամբ՝ ԳԿՄԿ գիտական խորհրդի որոշմամբ:

6. Սույն աշխատակարգը կարող է լրացվել կամ փոփոխվել ԳԿՄԿ տնօրենի ներկայացմամբ՝ ԳԿՄԿ գիտական խորհրդի որոշմամբ:

II. ԿԼԻՆԻԿԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Կլինիկայի գործունեության առարկան են կազմում ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի խնդիրների իրականացման շրջանակում տեսաիրավական հետազոտությունների և գիտագործնական աշխատանքների կազմակերպումը, իրականացումը և դրանց արդյունքներն ամփոփումն ու նյութականացումը:

8. Կլինիկայի գործունեության նպատակն է արդի աշխարհում պետության և իրավունքի հիմնախնդիրների գիտահետազոտական և տեսագործնական վերլուծությունների իրականացումը, ներառյալ՝ կրթական հարթակում դրանց արդյունքները կիրառելով:

9. Կլինիկայի խնդիրներն են.

1) *նպաստել* ժամանակակից պետության և իրավունքի առավել ամբողջական ու խորն ըմբռնմանը,

2) *աջակցել* հայկական պետականության զարգացման և ազգային անվտանգության ապահովման, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության ու խթանման գործիքակազմի կատարելագործմանը,

3) *բացահայտել* միջազգային իրավական հարաբերություններում և արտաքին քաղաքականության մեջ իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխիքների զարգացման ժամանակակից կառուցակարգերը,

4) *բարձրացնել* Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակությունում իրավական մշակույթը, այդ թվում՝ թիրախային թեմատիկ վերապատրաստումների ապահովմամբ,

5) *իրականացնել* Հայաստանի Հանրապետության պետաիրավական համակարգի բարեփոխմանը, զարգացմանը և ամրապնդմանն ուղղված հետազոտություններ,

6) նախաձեռնել և իրականացնել ներպետական ու արտաքին քաղաքականության օրակարգերում առկա խնդիրների իրավական վերլուծություն,

7) նախաձեռնել և իրականացնել հիմնական պետաիրավական համակարգերի համաշխարհային լավագույն փորձերի ուսումնասիրություն:

10. Կլինիկայի գործունեության նպատակին և խնդիրներին հասնելու համար կիրառվում են հետևյալ միջոցները (գործիքները).

- 1) գիտական հետազոտությունների և վերլուծությունների իրականացում,
- 2) թեմատիկ զեկույցների հրապարակում,
- 3) գիտական հանդեսների կամ ժողովածուների մշակում,
- 4) գիտակրթական միջոցառումների կազմակերպում,
- 5) պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներուժի օգտագործում,

6) ուսումնական դասընթացների պլանների կատարելագործման օժանդակում,

7) ուսանողության ներգրավում փորձնակության ծրագրերում,

8) մասնագիտական վերապատրաստումների իրականացում, որակավորումների բարձրացման և կարողությունների զարգացման ապահովում,

9) օտարերկրյա գիտահետազոտական և գիտակրթական կենտրոնների հետ համագործակցում,

10) միջազգային և ազգային գիտնակաների, փորձագետների կամ հանրային գործիչների հետ ուսանողության թեմատիկ քննարկումների կազմակերպում,

11) միջազգային և ներպետական ֆինանսավորմամբ գիտակրթական դրամաշնորհներին, թեմատիկ աշխատանքներին կամ մրցույթներին մասնակցություն,

12) այլ գործիքներ, որոնց կիրառումն արգելված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ներառյալ՝ «Հայաստանի

Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոն» հիմնարկի կանոնադրությամբ:

III. ԿԼԻՆԻԿԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

11. Կլինիկայի գործունեության վերահսկումն իրականացնում է Իրավագիտության ամբիոնի վարիչը:

12. Կլինիկայի գործունեության ղեկավարումն իրականացնում է Կլինիկայի պետը, որի թեկնածությունը հաստատում է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրենը՝ Իրավագիտության ամբիոնի վարիչի առաջարկությամբ:

13. Կլինիկայի պետը.

ա) հետևում է Կլինիկայի մասնագիտական և ֆինանսական գործունեության կատարմանը,

բ) կազմակերպում և ղեկավարում է Կլինիկայի ընթացիկ աշխատանքները,

գ) վերահսկում է Կլինիկայի բաժինների (դրանց առկայության պարագայում) աշխատանքները,

դ) ԳԿՄԿ տնօրենին առաջարկություն է ներկայացնում Կլինիկայի աշխատողներին օրենքով սահմանված կարգով խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ,

ե) իր բացակայության ժամանակ առաջարկություն է ներկայացնում պետի ժամանակավոր պաշտոնակատար նշանակվելու վերաբերյալ,

զ) պատշաճ կարգով կազմակերպում է Կլինիկայում տարվող գործավարությունը:

14. Կլինիկայի գործունեությունն ապահովվում է Իրավագիտության ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության ներուժի ներգրավմամբ:

15. Կլինիկայի գործունեության առանձին խնդիրների իրականացման համար կարող են ստեղծվել աշխատանքային խմբեր, գիտական թիմեր, իսկ ըստ անհրաժեշտության՝ նաև ներգրավվել փորձագետներ:

16. Կլինիկայի գործունեության արդյունքներն ամփոփվում են Իրավագիտության ամբիոնում: